№ 39 — ՔՍԱՆ ԵՒ ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ 7 ՅՈՒՆԻՍԻ 1886

ՄԵՂՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Տարեկան գինն է 10 ռուբլի.
վեց ամսուանը՝ 5 ռ., երեք ամսուանը՝ 3 ռ., ամիսը 1 ռ.
Առանձին համարներով իւրաքանչիւրը 5 կոպէկ.

Խմբագրատունը բաց է ամեն օր բացի կիւրակէ եւ տօն օրերից առաւօտեան 11—2 ժամը կէսօրից յետ.

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի խմբագրութեան հասցէով.— Въ ред. газеты «Мегу Айастани», въ Тифлисъ, կամ Redaction de «Meghou Haïastani», à Tiflis. (Caucase).

Խմբագրութեանս ուղղած թէ յօդուածները եւ թէ նամակները պէտք է պարզ գրուած լինին դրողի ստորագրութեամբ եւ հասցէով. Խմբագրութիւնը կարող է փոփոխել, ուղղել եւ կրճատել յօդուածները. Խմբագրութիւնը իւր վերայ չէ առնում յետ ուղարկել յօդուածները եւ պահում է երկու ամիս մինչեւ ցպահանջ.

Յայտարարութիւնների համար վճարում են ամեն մի բառին 2 կոպ.
Յայտարարութիւններ ընդունվում են հայերէն եւ օտար լեզուներով.
Յայտարարութիւններ ընդունվում են միմիայն պ. Շահմերդեանի պավիլիօնում.

Խմբագրութիւնս խնդրում է «Մեղու»-ի այն բաժանորդներին, որոնք դեռ ևս չեն վճարել տարեկան բաժանորդագինը. փութով հատուցանել այն մեզ. Նոյնը խնդրում է և անցեալ տարուան պարտքերի վերաբերութեամբ:

—

Կարելի է «Մեղու»-ին ստորագրվել մայիսի 1-ից և յունիսի մէկից վճարելով վեց րուբլի, իսկ կիսամեայ բաժանորդագինն այսինքն յուլիսի 1-ից 5 ռուբլի է.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.

6-ն յունիսի. — Հրաւէր:
Ներքին Տեսութիւն. — Աստրախան.—Նոր-Նախիջևան. — Մեծ-Ղարաքիլիսա.
Մանր լուրեր.
Քաղաքական. — Քաղաքական լուրեր.
Խառն լուրեր.
Յայտարարութիւններ.
Բանասիրական. — Իմ ճանապարհորդական յիշողութիւններից.

ԹԻՖԼԻՍ, 6 ՅՈՒՆԻՍԻ

—

Մենք մեր անցեալ յօդուածում յայտնեցինք այն միտքն, որ մենք սովոր ենք միայն քննել և պահանջել ուրիշներից, այն պաշտօնեաներից, որոնք բաս կոչման ունին բոտանձնած պարտականութիւնք դէպի ազգի մտաւոր և բարոյական զարգացումն և դէպի եկեղեցւոյ վարչութեան բարեկարգութիւնն ու նորա պայծառութիւնը, բայց իրանք բնաւ պարտականութիւն սահմանելու ոչ կամք և ոչ էլ գիտաւորութիւն յայտնում ենք: Եկեղեցական վարչութիւնից պահանջում ենք դպրոցներ և սոցա բարեկարգութիւն, ընտիր եկեղեցականներ, սոցա մէջ խիստ կարգապահութիւն, Ս. Աթոռի պայծառութիւն և այլն և այլն: Բայց մի՞թէ սոքա հնարաւոր են, եթէ ինքը ժողովուրդն իւր պահանջների հետ միասին և միջոցներ չի տալ այդ նպատակներն իրագործելու համար:

Այս հերիք չէ, այլ և ամեն մի գործ և մինչև իսկ լրագրական պատահական լուր ժողովրդի կողմից ծուռը և կասկածաւոր բացատրութիւնք են ստանում. որով կարծես հոգևոր իշխանութիւնն էլ պէտք է բոլորովին անձնատուր լինի անգործութեան և լռութեան, կասկածանաց տեղիք չը տալու համար:

Մօտերումս մի քանի լրագիրներում հրատարակվեցաւ, չը գիտենք ուստի առած, լուր, թէ Ս. Աթոռում կրօնական ժողով պիտի լինի:

Մեզ այդ յայտնի չէ, բայց գործնական առաջնորդների ժողով կազմել, հաշուեպահանջութեան և հրահանգներ տալու համար շատ կարեւոր էր: Ինչո՞ւ Հայրապետը տարին կամ մի քանի տարին մի անգամ չը հաւաքէ առաջնորդներին, սրանցից հաշիւ չը պահանջէ իրանց գործունէութեան մասին և չը տայ նրանց հրահանգներ իրանց բանեւլեք գիրքի մասին եկեղեցական վարչութեան, եկեղեցականաց մէջ կարգապահութիւն պահպանելու, ժողովրդաց բարոյականի, դպրոցների բարեկարգութեան և ուղղութեան հսկելու վերաբերութեամբ:

Առաջնորդները Հայրապետի փոխանորդներն են թեմերում և միջնորդը ժողովրդեան և Ս. Աթոռի մէջ: Ինչո՞ւ նոքա չը պէտք է յաճախ հրաւիրվին Ս. Աթոռը, անդեկանան սորա կարեաց և վերադառնալով իրանց վիճակները չը հասկացնեն ժողովրդեան նորա պիտոյքները ու չը նպաստեն յօգուտ Ս. Աթոռի և նորա հաստատութեանց ժողովրդեան բարեպաշտ զգացմունքից միջոցներ հայթհայթելու:

Ի՞նչ են մեր առաջնորդները. նոքա մեզ նշանակվում են և մեզ էլ փոխվում են, երբ նոքա կամ ժողովրդոց գժգոհութիւնն են յարուցանում իւրեանց դէմ և կամ Ս. Սինոդի հետ չեն համաձայն գտնվում: Իսկ գոքա տարիներ անցնելից յետոյ են լինում: Իսկ մինչև այդ պիտի դէպքերի պատահումն, առաջնորդն ի՞նչ է գործում, գործունեայ է նա, թէ անտարբեր դէպի իւր պարտականութիւնքը, հարցնող չը կայ: Նա ոչ ճիշդ հրահանգ ունի և ոչ ճշդութեամբ գիտէ, թէ ինչի՞ համար պատասխանատու է: Բայց երբ նոքա յաճախ հրաւիրվին Ս. Աթոռը, ստանան հրահանգներ, որոնց կատարումն իրանց պարտք համարեն, նոքա կարող չեն ի չքմեղս լինել անգիտութեամբ կամ արդարանալ իրանց անտարբերութեամբ: Առաջնորդների գործունէութիւնը մեր մէջ մեծ մասամբ կախված է առաջնորդի անձնաւորութիւնից և ոչ թէ նորա վերայ դրած որոշ պարտականութիւններից:

Եթէ առաջնորդը գործունեայ է, լայնախորհուրդ է և զգայուն, նա ամեն ինչ հոգում է անձամբ ընդարձակ ձևով, իսկ եթէ նա սահմանափակ է և անգործունեայ, գոհ է ձևականութեան պահպանմամբ միայն, որ մահ է և ոչ կենդանութիւն ներշնչող հոգի, որպիսին պիտի լինի առաջնորդն իւր վիճակի համար:

Բայց որովհետև այդպիսի լայնախորհուրդ և գիտութեամբ կատարեալ անձնաւորութիւնք սակաւ են մեր մէջ. ուստի և աւելի կարևոր է առաջնորդներին մանրամասն և որոշ հրահանգներ տալ և յաճախ նրանցից հաշիւ պահանջել, որպէս զի զգեթ պատասխանատուութեան բախմամբ նոքա կատարեն այն, ինչ որ Հայրապետը պատուիրել է, նրանց յօգուտ ժողովրդեան և 'ի պայծառութիւն եկեղեցւոյ:

Այսպիսի եկեղեցականաց ժողովներն ոչ թէ աւելորդ չեն, այլ և անհրաժեշտ են, թէ՛ գործերի միակերպ և արդիւնաւոր ընթացքի և թէ՛ եկեղեցական վարչութեան մէջ կարգ և կանոն պահպանելու համար:

ՀՐԱՒԷՐ

—

Քսան և իններորդ տարին է, որ «Մեղու»ն հրատարակվում է (24 տարի մեր խմբագրութեամբ), համօզմամբ ծառայելու Հայ հասարակութեանց մտաւոր և բարոյական շինութեան: Նա այդ երկար ժամանակամիջոցում, որքան հնար եղել է, աշխատած է ճիշդ լինելու գէպի իւր բաժանորդները, մեր և մեր փոքրաթիւ աշխատակից և բարեկամ անձանց տոկունութեամբ և զոհաբերութեամբ: Մենք այս չենք ասում որեւէ պահանջ անելու գիտմամբ. ոչ, որովհետև մեզ ոչ ոք, բացի մեր հասկացողութիւնից և խղճից, չէ ստիպել ձրի աշխատել և զոհել. այդ մեր համոզմունքի հետևանքն է եղել, որոյ համար մենք ենք մեր առաջ պատասխանատու.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԻՄ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴԱԿԱՆ ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ.

—

(Նուէր ուղղևորութեան թանամճեանցին)

—

1876 թուականի Յուլիսի 20-ն էր, մի պարզ և գեղեցիկ առաւօտ, երբ մեր կառքը, սուրհանդակի ձիաններով առաջ շարժուեցաւ Ա-ից դէպի Ծաղկաձոր (Ծաղկունեաց-ձոր) կամ, ինչպէս սովորաբար կոչւում են, Դարաչիչակ, ուր ուղևորվում էր եղբայրս իւր անձնական գործերի առթիւ, իսկ ես կամենում էի օգտուել դէպքից, այցելել բարեկամներիս Մեծ—Ղարաքիլիսում. մի փոքր պտոյտ անել Սևանայ լճի ափերով և վերջապէս տեսնել Ծաղկունեաց ձորը—այդ հին—պատմական վայրը, իւր հրաշալի բնութեամբ և ճարտարապետական հնութիւններով: Հազիւ թէ մի վերստաչափ հեռացել էինք առաջին կայարանից, որ մեր մօտից չը քացած 'գասանք' ճանապարհաթուղթը (подарожная) կառապանը յետ արեց մի ձի և սլացաւ պտռելու այդպիսին: Երեւ նա շատ անգամ էր պատահել նմանօրինակ դէպքերի և հմտացել հնարագիտութեան մէջ՝ որովհետև մի ժամից յետոյ նա վերադարձաւ բերելով մեզ, փոխանակ կորուսած թերթին՝ մի վկայագիր, որով յայտարարվում էր մինչև Ծաղկաձոր բոլոր կայարանապետներին, թէ մեր ճանապարհաթուղթը իրօք կորսուած էր և թէ ինչպէս ստուգուած էր անցորդների մատեանից դա ունէր այս ինչ համար, մի որոշ թուով տրուած: Այս երևոյթը որքան էլ անմխիթար, բայց և այնպէս պէտք էր շարունակել մեր ուղին. հետևեալ կայարանում, հաւատ ընծայելու էին այդ վկայագրին թէ ոչ. դա փոքր ինչ անհանգստացնում էր մեզ: փոքրիկ զառիվայրը իջնելով մի սպիտակ շինութեան առջև կանգ առաւ մեր կառքը. դա երկրորդ կայարանը— Համամլին էր: Այդ տեղ պաշտօնական մարդ չը կար և սուրհանդակի ձիանց կապալառուն էր միայն, որ մեր ունեցած թուղթը փոքր ինչ տնտղելուց յետոյ, զիջաւ հրամայելու ձի տալ: Համամլեցոց ես լաւ էի ճանաչում, նրանք, ոչ այնքան նշանաւոր բացառութեամբ, անցորդ օտարականների ունեցածքից մի բան թռցնելու վարժ մարդիկ են. շրջապատեցին մեր կառքը և ամեն սառնութեամբ սկսեցին զննել մեր իրեղէնները, բայց իմ խոժոռ հայեացքը չի վստահացրեց նրանց մտերմանալ նաև մեր ինչքերի հետ... անձ բաւ. և մեր վաղամանօթ եկեղեցական պաշտօնեայն, որ միևնոյն հիւրասիրութիւնն էր կամենում ցոյց տալ մեզ, ինչ որ արեց այդ օրից ճիշդ մի տարի առաջ, իւր բարեկամին, որի հետ ուղևորվում էի ես Սիսի պղնձահանքը:

— Ա՛ տղա, լաւ գինի բէ, ասում պըրինձ (փլաւ) եփեն, աղէքը հո սոված կը լեն... մէ չաղ գառը մորթեն. սրանց ինչկի լիս կը պահեմ, անճախ են ճանկըս ընկել. մի օր էլ թող յետևս յղու լեն...— պատուիրեց իւր ծառային թէ որդուն մեր հայր-կարգաւորը:

—« Զէ, նեղութիւն մի կրէք, եսյաւկապէս շնորհակալ եմ. մենք դեռ շատ ճանապարհ ունինք գնալու. դուք աւելի յարգած կը լինէք, եթէ թոյլ տայիք մի վայրկեան առաջ ճանապարհվելու: Մի տեսակ ակնածութեամբ խօսում էր ուղեկից բարեկամս:

— Քու օղլատը խէր ըլի, էլ օխտ տարուայ գինին կարասումը մնացել ա քեզ համար. իմ գառան մսից մի թիքայ որ անուշ անես ոչ, էլ ինչ ա քու աղութիւնն ու իմ նօքրութիւնը, Գլխովտ պտիտ, էս քըշէր, որ ասես քեզ կը թողամ ոչ...

— Եղուիթութիւն է. մի ժամից յետոյ պիտի ճանաչես դրան իւր բնական գոյնով... հաւատացնում եմ, ոչ գինի, ոչ խորոված և ոչ իսկ մի պատառ հաց կը գնէ մեր առջև: Շշնջաց ականջիս, աշխարհային եւ և էջներին հանդիպած, ձևերով հարուստ, բարեկամս. Բայց նրա գուշակութիւնը, Տէր Հօր թախանձանաց հետ համեմատելով ես բոլորովին սխալ կամ բարեկամիս կողմից դէպի քահանան մի տեսակ անյարգանաց կամ առելութեան արգաւմնք էի համարում.

Անցաւ մի ամբողջ ժամ և չը նայելով որ քահանան անվերջ հրամայում էր «գինի, ռօմ, լաղաթին պրինձ ու գառան խորոված» բերել, բայց ոչ ոք չը կար ուշադրութիւն դարձնող. ամեն մարդ իւր գործին, իւր պարապմունքին էր: Անգործը միայն նորին արժանապատուութիւնն էր, որ իւր բարեբարբն լոկ խօսքերով կամենում էր հիւրասիրել, ուրիշ խօսքով ցոյց տալ իւր ճշմարիտ երախտագիտութիւնը... վերջապէս նա վշտանալով որ այդ քան դանդաղ էր կատարվում իւր հրամանը. գաւազանը ձեռին, «Թըրխկ, Թըրխկ...» դուրս գնաց սենեակի դռնից. Նա գնաց թերևս մեր ներկայութեամբ էլ մուտ չը գործելու այդ տեղ: Զոհեցինք երկու և աւելի ժամեր. անձ մի կողմնակի մարդ խորհուրդ է տալիս մեզ ի զուր չի սպասել Տէր հօր վերադարձին. Նա իւր անձից է իջնայում իւր գառների միսը կամ չ'ունեցած գինին, ուր թէ կը հիւրասիրէր ուրիշներին... ես բաց արի մեր ունեցած պաշարեղէնների կապոցը, մի փոքր ճաշակեցինք. իսկ այդ հարուստ, բայց ժլատ կղերականին «պրինձն ու գառան խըրովածը» թողինք մի այլ անցորդի համար պատրաստելու:

Սակայն ես չեղուեցի իմ պատմութեան բուն նպատակից. ես այն էի ասում, որ այս անգամ էլ դիպան իմ աչքին այդ քահանայի մեծ քիթը, նրա նահապետական երկար ու գզգզուած մօրուքն և ընչացքը. նոյն կանաչ վերարկուն էր բեւրաւոր սև, կապոյտ ու դեղին կարկատաններով զարդարուած, նախշուն գուլպէքն ու կիսամաշ կօշիկներն էին. իսկ գառան մորթուց պատրաստուած մեծ գլխարկը տեղ տեղ միայն մաշուել, բրթաթափ էին եղել...

— Ծառայ եմ, ըսկի զրից, զառից ունէք ոչ. ըստի գեղ տեղ ա կը կարդանք յեւ ըղորմիս կը տանք: Իրեն չըքաւոր ցոյց տալով, խնդրեց Տէր-Տէրը.

— Ի՞նչ գիրք էք կամենում.— Հարցրի ես.

— Պատմութիւն կըլի, Թուաբանութիւն կըլի...

— Մենք ուսուցիչներ չենք և ոչ այնքան խորը գիտուններից, որ ճանապարհներում անգամ գրքեր ման ածենք մեզ հետ.—ժպտալով նկատեցի ես.

Չը նայելով որ քահանան շատ թախանձեց իւր ծիրանիների ստուէրի տակ թէյ խմել, պատուել իրեն և «մի թիքայ» կտրել Աստուծոյ պատրաստած սեղանից, հին դառը մտաբերելով ես հրաժարուեցայ. Բայց և այնպէս կայարանում մենք մի փոքր հանգստացանք. այդ տեղ ճաշեցինք ի հարկէ մեր սեպհական սեղանից և ժամը 2-ին, կէս օրից յետոյ, առաջ խաղաց մեր կառքը դէպի Ղարաքիլիսայ.

Մեծ-Ղարաքիլիսան փամբակի (հնումն Տաշիր գաւառ) կենդրոնատեղին է, նրա ծաղկած աւանը կամ գիւղաքաղաքը Ղշլաղից սկսեալ ճանապարհի (խճուղի) աջ կողմը կամ խիտ կամ անօս անտառ է (5 վերստ տարածութեամբ) ձախ կողմը մերկ կամ մացառոտ լեռներն են. դրանց վերին ծայրումը երևում է գիւղը—Ղարաքիլիսան—կանաչ ծառներով ու տեղ տեղ բարձրուղէղ բարդիներով ծածկուած.

Իմ աչքին դիպաւ այն հնադարեան հացենին, որի մօտից տասնեակ անգամներ անցուդարձ էի արել ես Սիսի պղնձահանքը երթևեկելիս. ճշմարիտ այդ մեծ և ստուէրաւոր ծառը, որ մին-

այլ մեր բաժանորդների շատերի անճշտութիւնն է, որ այսօր ստիպում է մեզ ներկայ հրաւէրը կարդալ:

Մինչև ցայժմ շատ տարիներ մեր ֆիզիքական ուժը թոյլ է տուել կողմնակի վաստակով և աշխատակիցների ձրի աշխատութեամբ լցուցանել «Մեղուի» նիւթական պակասութիւնը, չը նայելով շատ և շատ բաժանորդների անճշտութեան բաժանորդագնի վճարման վերաբերութեամբ, բայց այսուհետև այդ մեզ անկարելի է, ուստի և խմբագրութիւնս խնդրում է մեծ. բաժանորդներին, որոնք դեռ ևս չեն վճարել իրանց բաժանորդագրամը, թէ՛ անցեալ տարուան և թէ՛ այս տարուան ապառիկները փութով ուղարկել խմբագրութեանս, որպէս զի սա էլ ստիպված չը լինի ակամայ անճիշտ գտանվելու իւր պարտաւորութեանց մէջ:

Հաւատացած կենանք, որ 250 բաժանորդների վճարով մեր ծանր պարտքը կատարելը ճշգութեամբ հեշտ չէ և ցայսօր դրանցից էլ կէսըն իւր պարտքը դեռ ևս վճարած չէ:

Մենք կարող չենք արդէն մեր վերայ ծանրացած բեռը, պարտուց նոր յաւելուածով աւելի ծանրացնելու: Որքան կարողացել ենք, առանց պահանջի, արել ենք. աւելին խմբագրութիւնս անկարող է անել:

Մենք պարզ խօսում ենք մեր բաժանորդների և ընթերցողների հետ անընդունակ լինելով րէկլամների համար և ոչ նրանց յանձն առնող:

Կ'սպասենք ամաչափ ևս:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՍՏՐԱԽԱՆ

24 մայիսի 1886 ամ.

(Թղթակցութիւն «Մեղու Հայաստանի» լրագրի)

Որովհետև բաւականին խօսուեց ազգային լրագրերի մէջ գիտնական, բազմարդիւն Մկրտիչ Էմինի գրական յիսնամեակի հանդիսակատարութեան մասին, ուստի աւելորդ չի լինիլ եթէ համառօտակի նկարագրենք մեր քաղաքացւոց ուղարկած Ուղերձի, քանի որ նոյնը միւս այլ շատերի հետ դեռ ևս չէ՛ տպագրուած առանձին գրքոյկով կարգադրիչ յանձնաժողովի կողմանէ՛ ինչպէս խոստացուած էր:

Այդ ուղերձն է մէկ գեղեցկահիւս ոտանաւոր՛ զոր շարադրեց Աստրախանի օրիորդաց հոգևոր ուսումնարանի վարժապետ պ. Առաքել Վարդանեանց, Էջմիածնի ճեմարանի աշակերտներից և ոչ թէ Սրբազան Սուքիաս եպիսկոպոսն, ինչպէս պ. Շովրեանցն գրում է «Արձագանքի» 17-րդ համարում: Դա գեղանկար շրջանակով և խորհրդական նկարներով վեցերանգ գոյներով տպագրուած է Նոր-Նախիջևան քաղաքում պ. Սերովբէ Ցարութիւնեանի տպարանում յանձնարարութեամբ արժ. Խաչատուր աւագ քահ. Ջարիֆեանցի, ըստ խնդրանաց մեր վեճակի կառավարիչ Գերապատիւ Սրբազան Հօրն: Տպագրութիւնն է մաքուր բրիստոլ թղթի վերայ, որոյ գիրքն է երկայնութեամբ տասնևչորս վերշոկ և լայնութեամբ մօտ տասն: Երբ ուղերձը բացած գիրքը դրուի ակնարկողն կը տեսնի ճակատի կեդրոնումն իմաստութեան և գիտութեան պաշտպան՛ Արամազդայ դուստր Դիանայ դիցուհւոյ շնորհաշուք կենդանագիրը վեհութեամբ, կարմիր արկանելիով կիսածածուկ զարդարուած և բազմած գահաւորակի վերայ՛ ունենալով բաց բազուկներով երկու ձեռքի մէջ մէկ կիսախուփ փոքրագիր գրքոյկ՛ կազմն դէպի դուրս, իւր ծնգաց վերայ դրած խնամքով. իսկ ոտքերի տակ տարածուած մէկ ընդարձակ բացագիր մատեան՛ որոյ ձախ երեսի վերայ փորագրուած է ուղերձի առաջին երեք տունն, աջ երեսի վերայ միջին երեք տունն և դորանցից վերջըն կիսաբոլոր դէպ վեր հայեացքով ձգացորդ մի տունն: Այդ եօթըն տուն ոտանաւորի գլխատառերըն կազմում են «Մկրտիչ Էմին» բառեր:

Շնորհաց դիցուհւոյ բազկաթոռի յենարանի կողմերն եղած երկու վերամբարձ սիւնակներն բոցափայլ ճառագայթների երևոյթ ունին 'ի նըշան ճաճանչա-ու խա լուսաւորութեան: Գահաւորակի աջ և ձախ կողմերը ներքևում կան դրուած երկրագունդ, քարտէսներ, բնագիտական գործիք և վերևում գալարուն ժապաւէնների վերայ գլխատառերով կարդացվում են մէկ կողմից «'Ի յիսնամեակն բազմարդիւնոյ» իսկ միւս կողմից «Մկրտիչ Էմին»: Ուղերձի վերին աջ անկիւնում կայ բոլորակ նկարի մէջ ձևակերպած գիշերահաւ, բուէճ, որոյ հանդէպ դրուած է վառ ճրագ և բաց գիրք 'ի խորհուրդ «լոյս խաւարելոց» իմաստին. իսկ ձախումն նոյնպիսի պարունակի մէջ կան կաղամար, գրիչ, գալարուն թուղթ, գիտակ և հատորներով գրեանք 'ի նշանակ «գրական վաստակոց»: Դիանայի ամբողջ գահոյքն լուսոյ ճառագայթների հոսանքում ընկղմուած է և ինքըն գտնվում է խորհրդազգած յափըշտակութեան մէջ: Մեծադիր մատենի ստորին երկու կողմերն շաղապատում են գալարի ողկուզի բարունակներ: Այս բոլորին իբրև վայելուչ պսակ ընդարձակ բաց երկու թերթերի մէջն բաւականին նշմարելի ստուերագրերով կանաչաշորթ գունով տեսնվում են երկաթագիր գլխատառերով յիշատակ բառերս կիսաձարակն վերահայեաց ձևով «Մովսէս Խորենացի», որոյ թարգմանութիւնք և բացատրութիւնք գըլուխ գործոց են մեծարգոյ գիտնական Հայկազին:

Վերոյիշեալներից ներքև գեղեցկաձև երկու հրեշտակակերպ արձաններով բաժանուած երեք երկայն քառակուսի տեղեր կան, որոնք յատկապէս որոշուած են ստորագրութեանց համար: Դրանցից առաջին խորանումն ստորագրուած են դասք հոգևորականաց՛ առաջնորդից մինչև վերջին քահանայն, երկրորդումըն՛ հոգաբարձուք և ուսուցիչք հոգևոր դպրոցաց, երրորդումն՛ պատուաւորք 'ի հասարակութեան: Ստորին բաժինն, որ ստորագրութեանց տեղն է, ընդհանուր ձևով շրջափակուած է գալարի ողկզանիկով, իսկ հրեշտակատես արձաններն ունին իրենց ձեռքերում վերամբարձ պահպանած պսակաձև վինչէներ՛ միասնութիւնք որոց առաջնոյն վերայ տեսնվում են կարմիր գեղով Մ և Է փակագրած գլխատառերս, այսինքն Մկրտիչ Էմին. երկրորդի վերայ Հ և Ա նոյնպիսի գըլխագրերն, այսինքն Հասարակութիւն Աստրախանի: Ստորին և վերին բաժինների միջոց մէկ երկայն անջըպետող աղիւսակի մէջ սևաներկ գլխագրերով նշմարվում են սոյն բառերն «Հասարակութիւն Հայոց Աստրախան քաղաքի»: Այս համապատաշաճ և խորհրդական նկարների հեղինակութիւնն կը պատկանի Հայր Ջարիֆեանցի և պ. Ցարութիւնեանցի շնորհաց: Չը մոռանանք յիշել, որ ուղերձի ձախակողմն վիմագրուած է «ոգեաց Առաքել Վարդանեանց» խօսքերն, իսկ աջակողմն «'ի 17 ապրիլի 1886 թուականի»:

Այսքան խնամքով ստորագրութիւնից յետոյ ահա՛ և իսկական չափաբան ուղերձն՛ որոյ վիմատիպ օրինակներն այժմս գտնվում են քաղաքիս ազգային հաստատութեանց մէջ՛ առաջնորդարանում, երկսեռ դպրոցներում հասարակական խորհրդարանում և աղքատանոցում:

Ի ՅԻՍՆԱՄԵԱԿՆ ԲԱԶՄԱՐԴԻՒՆ ՄԿՐՏՉԻ ԷՄԻՆ

ՈՒՂԵՐՁ

« Մի պարծեսցի յետ Ցակիտոս Հըռովմ 'ի խորհուրդս մի Վիրգիլ,
« Թէ 'ի զարմանս աշխարհ համայն յապուշ հարաւ 'ի տեսիլ,
« Թէ 'ի ծոցոյն ծնոյց քաղաքն՛ մնոյց 'ի գիրկ կաթոգին
« Եւ 'ի Նախնած ազգաց ազանց զա նուանս երգեաց գողտր ի վին.
« Կենցաղեցաւ դար հռովմայն և յիշատակ անցելոյն
« Թագ 'ի ճակատ հայրենական բոլորեցաւ 'ի գրենոյն.
« Ճոխքան զականս պատուականս գանձք իմաստից լիաձիր
« Կրթեցին զազգն համանգամայն յաշխատութեանցն անձանձիր
« Բետոր 'ի մեզ ահա Էմին ծնաւ և մե րըս Հայ աշխարհ
« Որ ըզմերոյ Նախնեաց զբանս համ 'ի վաստակ յերկ արդար.

չև այսօր էլ մերկ և սպիտակ լեռան ծայրին հպարտ կանգնած է, արթնացրեց իմ մէջ հազար ու մի տեսակ մտքեր. շատ անգամ Ղարաքլիսում մեր բնական տանից աչքերս սևեռած այդ ծառին՛ ես անհանգստութեամբ սպասում էի պղնձահանքից իմ արիւնակիցների գալստեանը. այդ տեղ դեռ 1869 թ., երբ առաջին անգամ Մատանցի Ցոյներից գանահարուած կիմպիլի հետ, անց էի կենում, գրեթէ 10—11 ամաց երեխայ էի, որ ձիուց վայր ընկնելով՝ վնասեցի ձախ ձեռս: Եւ առհասարակ այդ ճանապարհների (Ղարաքլիսից—Սիսի հանքը) ամեն մի քայլափոխը ինձ համար իւր որոշ պատմութիւնը ունէր. որպիսի հրճուանքով ու զուարճութեամբ մենք անց ու դարձ էինք անում ջոկեր. ջոկեր յոյն հասարակութեանց (երկսեռ) և արիւնակցացս հետ այդ վայրերով. ես մտաբերեցի Վարդանեանց պատերազմի տօնը, որ 1874 թուի, այնքան հանդիսաւոր կերպով կատարուեցաւ, եղբօրս շնորհիւ, գրեթէ առաջին անգամ Ղարաքլիսայում. Մամբրէ Բզնունին, կարուց մանկավարժը, որ այժմ վարդապետական պատկառելի վեղարը գլխին ծածկած՛ ով գիտէ Ցաճկաստանի որ անկիւնում գործում է անդադրում. Գաղիայի հասուլիկ դրամատէր գեներալը, Բազէնի կուսակիցներից մէկը, որ խոյս էր տուել հայրենիքից՛ Կովկաս և որը այնքան սիրում էր զուարճալի հանդէսներ անել. Գնդապետ Լազարեանը, «Սուրբ Գէորգի ծառան», որ խորին ծերութեան մէջ անձնատուր էր որսորդութեան և ձկնորսութեան գործին: Դա 1812 թ. Ղարաբաղի պատերազմի ժամանակ, եղել է, չը գիտեմ ինչ ամրոցի բերդապահ, մարմինը ծածկուած էր վէրքերի անթիւ սպիներով, ունէր ոսկեայ սուր (золотая сабля) և այն բոլոր չքանշանները, որոնք համապատասխան էին իւր կոչմանը. մօտ 60 տարի և ոչ մի կաթիլ ջուր չէր խմել. նրա խմածը միմիայն գինի և ռոմ էր: Դա, կարծեմ, Գնդապետի աստիճանը ստացել է Երևանի առման ժամանակ—1827 թ.: Աստրախանցի էր, երջանկայիշատակ Ներսէս Ե.-ի մտերիմ բարեկամներից մէկը՛ Ջափազանց հայրենասէր էր . . . Վաղուց զրկուած պաշտօնից՛ Վախճանեցաւ Ղարաքլիսում 1875 թ. յունուարի 1-ին. աւելի քան 90—95 ամաց հասակի մէջ:

Մենք մտանք գիւղ. ահա այն բնակարանը, ուր եղբայրս պաշտօնավարութեան ժամանակ ապրում էր: Նա զարդարուած էր բաւական ընդարձակ և գեղեցիկ ծաղկանոցով, ուր երփներանգ ծաղիկների եդեմական անուշահոտութիւնը զմայլեցնում է մարդիս հոգին: Նրան շրջապատում են սօսիներ, ակացիաներ ու ընտիր պտղատու ծառեր: Դա բարեխիղճ անտառապետի կալուածքըն է. կալուածք, որ իւր դիրքով ու գեղեցկութեամբ, իրօք, Եդեմի դրախտին է նմանում:

Պարտիզի շրջապատի մօտ մեզ դիմաւորեց հայազգի տիկինը, իսկ հիւրասէր Անտառապետը (Գերմանացի) սրտի առանձին բերկրութեամբ ընդունեց մեզ իւր դաչեբճում. 5 ամիս էր անցել, որ մենք չէինք տեսել միմեանց. 5 ամիս առաջ, մեր բաժանման ժամանակ, ես նկատեցի, թէ ինչպիսի առատութեամբ բղխում էին այդ Գերմանացի սպայի աչքերից արտասուքի կաթիլները, որովհետև 6 ամբողջ ամիսներ մենք ապրել էինք միատեղ, մի յարկի տակ:

Առաւօտեան դուրս եմ գալիս փողոց: Շրջապատում են ինձ վաղեմի ցոյն, պըղնձահանքի, ծանօթներս. ահա, փաշա Կօզման ու Պավէլն, որ երկու տարի առաջ մէկը միւսի մօրուքից ջլըած՛ անթէժմաններով ու բռունցքներով պատւում էին միմեանց: Պավլէիս ատամներն էր փչրվում, իսկ փաշա Կեզման զօռ էր տալիս իւր թլուատ լեզուին. ահա Գոռզոռը, որ մի անգամ, Նոր Տարուն, երբ «կալանտարէ կէ կալաչկէշխո» ասելու նորհ էր բերել՛ կօղինախ ուտելիս, վեց ատամը միատեղ դուրս թափուեցան բերանից և ծնօտները ամուր բըռնած՛ իւր բաղդը անիծելով՛ դուրս գնաց սեամից, Սուլիա—Ղոռզոռը, այդ ոչխարի պէս մարդը. Ցուլիկաձին, Սոտէֆանն ու Կոստանդինը, որ Մատանում մի բարեկենդան ժամանակ, մեր կառաած հարսանիքում ծաղրածուի յաջող դերեր էին կատարում. հեռուից մաթմաթալով երևում է և ցոյների «Աբբա-Մարկոսը» — փաշա-Տիտիկօն, Մատանցոց 40 տարիների վայրենի հովիւը, որի մասին արժէ մի քանի խօսք ասել: Տիտիկօն այդքան երկար ու ձիգ տարիներ, ձմեռ և գարուն անընդհատ բնակուելով կամ հովուի պաշտօնը վարելով Սիսի խիտ անտառներում, կատարելապէս վայրենացել էր. Նա կերածը այն էր, ինչ որ ուտում էր իւր հօտը, մինչ մերկ, ոտաբոբիկ և գլխաբաց, արևի և անձրևի տակ նրա կաշին այնքան հաստացել էր ու թաւ մազով ծածկուել, որ առաջին անգամ տեսնող անծանօթը սոսկում էր և մարդ լինելը դժուարութեամբ հաւատում. Նրան այլ ևս ոչ արևի կիզիչ ճառագայթներն էին ներգործում, ոչ անձրևի տարափը, ձեան և ցրտի սաստկութիւնը. Տիտիկօն գրեթէ կորցրել էր և խօսելու ընդունակութիւնը. դա կատարեալ վայրենացած էր:

Սիսի Մատանցիք հաւաքուել էին այդ տեղ մի քրէական, նշանաւոր գործի առթիւ, դատաստանական քննչի հրաւիրագրով:

Ղարաքլիսան 300 տուն Հայ բնակիչներ ունի, որոց մէջ, բացի բնիկները, կան 1829—1830 թուականներին կարսոյ գաղթականներից. ունի 4 քահանայ, մի սագաչէն եկեղեցի, Սուրբ Աստուածածին անունով, ներսից ներկէն նկարներով զարդարուած. դա ընկնում է գիւղի ծայրում, փոքրիկ բարձրաւանդակի վերայ, «փամբակ-չայ» գետի ձախ ափում: Ունի միայն տղայոց հոգևոր ծըխական դպրոց 30—40 աշակերտով: Այդ տեղ ձմեռ, գարուն, զետեղուած է 39-դ «Դէնբենտսկի» գնդի, մի վաշտը (баталіонъ) հայազգի գնդապետ— իշխան Ա. Արղութեանի հրամանատարութեամբ, կառավարում է Ալէքսանդրոպօլի գաւառապետի օգնական պ. Սումինը:

Օդը հովասուն է և բարեխառն. առողջարար ջուր և պտղաւէտ ու արգաւանդ հող ունի:

3 ամբողջ օր վայելելով մեր բարեկամ Անտառապետի հիւրասիրութիւնը, յուլիսի 24-ին, առաւօտեան վաղ դուրս գնացինք—դէպի առաջ, մեր նպատակատեղին: Այս տեղից մինչև Համզաչիման դեռ չինուած չէր խճուղին, իսկ Համզաչիմանից ուղիղ և հարթ ճանապարհ էր մինչև Դիլիջան: Սեմենօվկայ կայարանում մի ինչ որ ազգանունով վերակացու վարանում կամ դժուարանում էր մեզ ձիաններ տալու. «ժամանակը բաւական ուշ է և Ձեր անցաթուղթը մասնաւոր լինելով՛ հարկադրուած էք մինչև առաւօտ սպասելու...» այս էր նրա պատասխանը: Սակայն մեր մատուցած մի քանի բաժակ ընտիր օղին նորին բարեծննդութեանը հաշտեցրեց մեզ, հասարակ անցուորներիս հետ և ապա հաղիւ թէ դիջաւ հրամայելու, որ լծուին կառքի ձիանքը. բայց նրա այսքան կոպիտ վարմունքը մեզ հետ, կ'ասեմ առանձնաբար, որ առիթ եղաւ, մի քանի օրից յետոյ, դէպի Տփխիս ճանապարհորդելու, վասնզի կոչուած էր այնտեղ առանձին հեռագրով:

(Կը շարունակվի).

Կրպէ.

« Նախնի աւանդ պատմագրացս՝ որ ընդ քօղով ձիգ ծածկէր
« 'Ի շարժ 'ի թռիչ հզօր գրչին յանյայտութեանց 'ի յայտ բերս
« Ցեսցէ Եւրոպ 'ի կայս 'ի կոյս զարդիւնս քրտանց յետ անկեան
« Եւ վաստակոցն զփորձ առնէ Հայ Մըշակին գրական՝
« Որ դեգերեալ յէջս պատմութեանց 'ի բազում ամս անվեհեր
« Ցօգունս բարեաց առհաւատչեայ՝ նըստեալ գրոց առընկեր
« 'Ի մեծամեծ գործս ձեռաց յարդիւնս ատոք զօրացաւ
« Պաշտեալ 'ի սիրտ հայ որերոյն ճանաչաւէտ փայլեցաւ,
« Գեղեցկահիւս յօճան ազգին զընտիր հատուածս 'ի նուէր
« 'Ի զպրութեանց վերածնելոց խմաստնաբար ընձեռէր
« Զքնարս զլարս իւր մատենից թող մեզ հանդէս գեղապանծ
« Ո՛չ 'ի պարծանս փառախնդիր և ո՛չ 'ի ցոյց սիգապանծ,
« Այլ հայրենեաց սպաս կալաւ հաւատարիմ գոլ որդի
« Հնպա աստէն յիշատակի կանգնել կոթող և անդրի
« Էից կաճառ խայտայ ընդ մեզ ընդ Ցոբելեան Հայկազին
« Մէն մի չքնաղ հիւսել պսակ զճակատաւան վեհազին
« 'Ի սիրտ Հայոց յաւերժագիր 'ցորչափ արփին 'ի յերկինս
« Նշողազարդ գծէ զուղիս գնայ ընդ կաճարս և ընդ ծիրս

«'Ի 17 ապրիլի 1886 թուականիՓրկչին»

Սորանից 'ի զատ նախանցեալ ապրիլի 17-ին ուղղուեց մեծարգոյ Էմինին իւր աշակերտներից՝ Լազարեան ՃեմարանիՍաներից, հետագայ հեռագիրը հայկական բարբառով և լատին տառերով:

«Վերատեսչի Լազարեանց ՃեմարանինՊարոն Քանանեանցին.

«'Ի մեծարանս յիսնամեայ յոբելեանի «Մեծահամբաւ Հայազգի գիտականի՝

« Մ կ ր տ չ ի Է մ ի ն»

« Երկունք մտաց Սոփեստիդ 'ի շուք հայազն պատմութեան
« Եւ ալէզարդ խորենացն ընդ շար ա. կանցն գոլ թարգման,
« 'Ի կարգ գիտնոց Եւրոպեան՝ 'ի Պանթէօն գիտութեան,
« Անձեռագործ կառուցին քեզ վեհ կոթող և արձան.
« Դատարակ մեր և Հայր զքոյդ կէս դարուն յոբելեան
« Շնորհաւորեն սիրտ 'ի թունդ՝ եղեալ սանունք Լազարեան»։

Հեղահոգի յոբելինի հանդիսաղիրն Էմին՝ այդ երկու ուղերձների և Աստրախանի վիճակի այլ քաղաքներից գնացած շնորհաւորականների համար, վիճակիս Սրբազան կառավարչին առանձին սրտառուչ գրութեամբ յայտնած է իւր գոհունակութիւնն, որ պաշտօնագրով հաղորդուեց ամեն ուրախակից եղող ժողովրդոց: Հայոց հասարակութեան տա՛ր երկինք շատ ականաւոր և օգտակար գործողներ գրական ասպարիզումն, որոց յոբելեանները տօնուէին շքեղութեամբ:

***

ՆՈՐ ՆԱԽԻՋԵՒԱՆ

11 մայիսի 1886 թ.

(Թղթակցութիւն «Մեղու Հայաստանի» լրագրի)

Մեր Փոխադարձ Վարկի ընկերութեան բանկի տարեկան ընդհանուր ժողովի երեկոյին մի անախորժ և անսպասելի դէպքի մասին անկարելի եղաւ լռել և չը գրել:

Սկզբէն՝ անդամների մեծամասնութեամբ որոշուել է, որ այդ երեկոյ ինչ նշանաւոր խնդիր՝ լուծելու և ընտրողութիւն անելու լինին, կատարուի գաղտնի քուէարկութեամբ: Այդ հիման վերայ էլ սկսել են գործը շարունակել: Բայց երբ կարգն եկել է պ. Պալապանեանի քուէարկութեան. մի շարք մարդկանց առաջարկել էր, սորան՝ առանց քուէարկութեան ընդունել միաձայնութեամբ անդամ բանկի խորհրդի և մի շարք մարդկանց էլ բողոքել է այդ անկանոնութեան դէմ՝ մէջ բերելով սկզբնական որոշումն:

Ժողովի նախագահ պ. Պասակովի և նորա հետ էլ կենձողլուեանի և Պալապանեանի պնդմամբը և ազդեցութեամբն,— որ կամեցել են վերջինին առանց քուէարկութեան ընդունել տալ անդամ խորհրդի,— դիմադրող կուսակցութեան ոյժը սակաւ առ սակաւ նուազելով թուլացել է. և՝ Պասակովը իւր ստիպողական և ինքնակամ զօրութեամբը հարկադրել է,— մի խօսքով— կատարել է և արձանագրել տուել է «ընդունել Պալապանեանին անդամ բանկի խորհրդարանի»:

Այդ անկանոն գործողութեան դէմ դիմադրողներից պ. Խալիպեանը և մի քանիսը բողոքել են, և՝ պահանջել են, որ իրենց բողոքը տնցնի արձանագրութեան մէջ: Իսկ Պասակովը յօժարացած չէ և ուզած չէ լսել: «Յայտնի բան է գործը կատարված է, գանգատեցէ՛ք ուր կը կամենաք» և այլն և այլն պատասխանելով:

Պասակովը Ռոստովում արքունի բանկի կառավարիչ—մեր Փոխադարձ Վարկի ընկերութեան, բանկի դիրեկտոր և Ֆինանսական ոյժի ազդեցութիւնը իւր մէջ բովանդակող. միւս երկուքն էլ,—կ. և Պ. որպէս անդամք խորհրդի և միայն գորա շնորհիւն ազդու զօրութիւնը ձեռքերում, այդպէս վստահութեամբ վարուել կարող են. բանկի մէջ հաւաքուած անդամների հետ... այլ թէ որքան արդար է այդ և իրաւացի, մնում է ընթերցողին դատել:

Այժմ ինչպէս որ՝ սուղապէս գիտենք—լսած ենք շատերս, պ. Մ. Խալիպեանը և Գ. Կաթենիկեանը բողոքագիր ուղարկել են, մանրամասն հաղորդելով՝ կատարուածի մասին, Ֆինանսական նախարարութեան: Տեսնե՛նք, այդ բանից ի՞նչ դուրս կը գայ Պասակովի համար,— ո՞ւզտ թէ մուկ:

Պ. Պասակովը տասը տարիներէ աւել է, որ իւր դիրեկտորական պաշտօնի համար մեր բանկի մէջ, 2400-ական ռուբլի ամեն տարի ստացել է, (բացի տարին տարեկան 600, 700, 800 ռուբլիներ ընծաների) շաբաթը մի կամ երկու անգամ յաճախելով. յետոյ՝ վերջումը տիվիտէնդներից 5000 ռուբլի էլ ընծան վերցրեց

Ց. Պապասինեան.

ՄԵԾ-ՂԱՐԱԳԻԼԻՍԱ

28 ապրիլի.

(Թղթակցութիւն «Մեղու Հայաստանի» լրագրի)

Արհեստը այն միջոցն է, որով մարդս ստանում է աշխարհիս մէջ իւր որոշեալ և պատուաւոր տեղը:

Մասնաւորելով խօսքս Ղարաքիլիսայի մասին, պիտի ասեմ, որ սա օր աւուր առաջ է գնում արհեստների մէջ և մի անդաղրում ձգտում, մըղում ունի դէպի կատարելութեան:

«Մեղուի» մէջ 1884 թուին տըղամարդկանց արհեստագիտութեան վերայ խօսելով, կանանց մասին գիտենալիքս բաց էի թողել, մինչև այս գրութիւնս, որով այժմ ուզում եմ ընթերցողին մի ծանօթութիւն տալ գորա մասին:

Տնտեսութիւնից յետոյ կանանց գլխաւոր պարապմունքներից մէկն է նաև գորգագործութիւնը իւր բոլոր մասերով, ինչպէս օրինակ կապերներ, չուխացու շալեր և այլն գործելը: Գորգագործութիւնը այնքան առաջ է գնացել, որ իրեն համար այսօրվան օրս շատ սիրահարներ է վաստակել. և տուն չը կայ, որ գորանով պարապած չը լինի: Կալ ու կտից յետոյ՝ պառաւ կանանց գործն է ջահելների ընկերակցութեամբ մանել, գզել, նախնի նահապետական գործիքներով, ինչպէս օր. ջահրայով և սանդերքով, որից յետոյ ուղարկում են բոլոր թելերը ներկարարի մօտ, որը նոյպէս գիտէ իւր արհեստով թելերը յարմարացնել պահանջեալ գոյներին, որոնք խունանալ բնաւ չ'ունին: Կան մի քանի տեսակ գոյներ, որոնց նոյն ինքը տիկին— ներկարարն է յարմարեցնում զանազան խոտերից, ծաղիկներից: Երբ որ այդ ամենը վերջացնում են, ապա մեծ պասը գալուն պէս՝ սկսում են հինել և գործել, ընդօրինակելով Պարսկաստանի լաւագոյն գորգերից, ըստ որում, ասած է, որ համարեա՝ դեռ ևս մէկը չէ դուրս եկել, որ կարողանար առանց օրինակելու՝ իրենից ծաղիկ նկարներ ստեղծէր և գործէր: Բայց որովհետև քանի ժամանակը առաջ գնայ, այնքան և այդ արհեստը կը զարգանայ, ուստի կարող ենք յուսալ, որ ժամանակին ուստաներ էլ կ'ունենանք, որի համար առ այժմ փոքրը ի շատե նմուշներ են երևում: Գորգը գործելու համար 10-ից բարձր հասակաւորները գործում են. բոլոր գործիքները վեր առած, որոնց վերայ հինած է գորգը, կոչվում է՝ «տորք», որի ամեն մի մասը յատուկ իւր անունն ունի, որոնց անունները այստեղ աւելորդ եմ համարում գրել:

Վերջացնելով խօսքս, պիտի ասեմ, որ կան այնպիսի գորգեր, որոնք 100 ռ. աւելի կը գնահատուին, սակայն տիրոջ ծախքի քանակութեանը նայելով՝ ամենևին թանգ չէ, ըստ որում, ոչ բուրդն է տանում, և ոչ ներկը և այլ ուրիշ բաներ: Ընդհանրապէս վեր առած, մեր այրինք սիրում են մոդ կարմրագոյնը, որով հիմնուած է լինում և խալիչաները: Պիտի ասած, որ սա էլ ոչ պակաս ճարտարութիւն է, իւր գեղեցիկ և շնորհալի տեսքով. կանգնում ես մօտը, գործելու ժամանակ, գործողները «թելիփները» շարում են և ահա մի քանի շաբաթից յետոյ առաջիդ ներկայանում է մի ճարտար, սքանչելի գործուածք, որ կատարվել է մանկահասակ կանանց և օրիորդների ձեռքով:

Վենուս.

Բժշկական խորհուրդը նորերումս հաստատեց կանոններն այն կարգի մասին, որով թոյլ է տրվում մանկաբարձ կանանց պահելու ապաստանարան յղիների և ծննդականների համար, և ուղարկեց այն կանոնները բոլոր նահանգական բըժշկական վարչութեանց 'ի գործադրութիւն:

***

Բորչալուում ցորեններն արդէն հասկ են կապել. ցորէնի և գարու հունձն առատ է լինելու: Խոտն արդէն շատ տեղերում հնձում են: Առատ են և պըտուղները, մանաւանդ խաղողն, որոյ հիւանդութիւնը չէ նկատվում:

***

«Русск. Кур.» լրագիրը հաղորդում է, որ արքունի կալուածոց նախարարութիւնն Միջին Ասիայի անապատների ոռոգման խնդրի հետ ներկայ ամառը ձեռնամուխ է լինելու և ընդարձակ տարածութեամբ անտառներ տնկելու նոյն անապատներում, իբրև միջոց չարժուն աւազի առաջն առնելու, որոնք լցնում են գետերն ու աղբիւրները ինչպէս և վնասում են օվազիներին, որոնք այդ երկիրներում յոյժ անհրաժեշտ են խաչնարածութեան, այգեգործութեան և ցորենի մշակութեան համար: Նախարարութիւնն սորա համար պահանջում է մի միլիոն:

***

Ամսոյս 7-ին մտադրութիւն կայ Կովկասեան գինուորական շրջանի աւագ քահանայ Ստեփան Իվանովիչ Գումիլեվսկու յիսնամեակը տօնել:

***

Կովկասը հաղորդում է, որ Կովկասի հանքային հարստութիւնքը մշակելու համար Մոսկվայի դրամատէրերը կազմում են նշանաւոր ընկերութիւն, որ ներկայ ամառս պէտք է անել կարևոր հետազօտութիւնքը, թող տեղական դրամատէրերը քնեն:

***

Կովկասի գիւղատնտեսական ընկերութիւնը մտադիր է Թիֆլիսում և կամ երկրի մի տեղում, ուր աւելի խաչնարածութեամբ պարապում են, օրինակելի դպրոց կարնային տնտեսութեան, ըստ օրինակ ի Վերեշչագինի դպրոցին: Առաջադրութիւնն այս մասին, շատ հաւանական է, որ քննվի ընկերութեան նիստում առաջիկայ աշնանը:

***

Փոստային հաստատութիւնք այն պետութեանց, որոնք կազմում են միջազգային փոստային դաշնակցութիւնք, ի գործադրութիւն հանել են 5 և 10 կոպէկանոց փոստային փակ նամակներ, որոնցից առաջինը ներքին և երկրորդը արտաքին թղթակցութեանց համար է: Այդ ծրարների մէջ թոյլ է տրվում դնել մի կամ միքանի թերթ թուղթ, նոյնպէս և այլ իրեր, որոնք թոյլ տըրված են դնելու հասարակ նամակներում: Հինգ-կոպէկանոց փակ նամակները կարելի է և արտասահման ուղարկել, միայն այն պայմանով, որ նոցա վերայ կպցնեն 5 կոպէկանոց փոստային մարկա:

***

Ցայսանի ռուս ճանապարհորդն Աֆրիկայում տիկին Գոնչարովան այս ամառ ճանապարհորդելու է Պաղեստինէում և Արաբիայում: Նրան ուղեկից կը լինեն մի բոյսերի և կենդանեաց ժողովող և մի լուսանկար:

***

Ռուսաց նաւագնացութեան և վաճառականութեան ընկերութեան բաժանորդների ընդհանուր նիստում կարդացուած հաշուից երևում է, որ ընկերութեան Սեաստոպոլի նաւարանում չինած երկու «Զեսմա» և «Սինոպ» զրահակիր նաւերի համար կառավարութիւնը կ'վճարէ ընկերութեան 6,435,000 ռուբլի իսկ իւրաքանչիւր թնդանոթակիր նաւակի չինութեան համար 400,000 ռուբլի:

***

С Пет. Вѣд. լրագիրը հաղորդում է, որ 22-ին մայիսի պ. Մոնկն իւր ընկերներով ճանապարհ է ընկել դէպի Կովկաս, այն նպատակով որ Երևանի չրջակայքում գտնէ յարմարաւոր տեղ Բամբակն ագարակի համար, որպէս զի ամերիկական սերմից բամբակ մշակեն: Ընկերութիւնը մտադիր է Բամբակի մշակութիւնը ընդարձակ ձևով առաջ տանել. որովհետև գործարանների կողմից մեծ պահանջ կայ:

***

Վ.ոն. 22 Ապրիլ 1886։ — Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի օրհնութեան անդրանիկ կոնդակը Աւագ հինգշաբթի տեղս հանելով՝ Աւագ ուրբաթ աւուր երեկոյ Ս. Նշան եկեղեցւոյ մէջ հանդիսաւոր կերպիւ կարդացուեցաւ Գեր. Տ. Պօղոս Սրարզանի միջոցաւ, և Ամեն. Տ. Խաչատուր Կաթողիկոսն կոնդակի իմաստին համաձայն խրատներ խօսելով մխիթարեց ժողովուրդն: Հայ-

րապետական կոնդակին ընթերցումն այսպէս հանդիսու տեղի ունեցաւ միւս եկեղեցեաց մէջ ալ:

(Փունջ)

* * *

ՊԵԱՏԻԳՈՐՍԿԻՑ մեզ գրում են. — Մայիսի 11-ին Երևման խաչի տօնի օրը կարդացուեցաւ տեղւոյս հայոց եկեղեցում վեհափառ Հայրապետի օրհնութեան անդրանիկ կոնդակը, որից յետոյ, տեղւոյս բարեկարգ հայր Աբրահամ քահանայծ վայելուչ ատենաբանութեամբ, բացատրեց ներկայ հանդիսականաց հայ եկեղեցւոյ Պետի նշանակութիւնը, որը այսօր բազմելով իրեն նախորդների թափուր մնացած գահը, կ'ամփոփէ ի մի նորա որդւոց սիրտը, և որը պատրաստ է զոհել ամեն բան, ի սէր իւր հօտի և եկեղեցւոյ: Այնուհետև մի ակնարկ ձգելով հայոց պատմութեան վրայ աւելացրեց քարոզիչը, որ հայ ազգը թէև ունեցել է իրեն քաղաքական ոյժը, այնուամենայնիւ նա մի կրօնական ժողովուրդ է, որի բարոյական գիտութիւնից, կարող են շատ ազգեր օրինակ առնել. Հայ ազգը եթէ այսօր գոյութիւն ունէ աշխարհի վերայ, նա իւր գոյութեամբ պարտական է իրեն կրօնին և եկեղեցուն, որի գլուխը և Պետը է հայ կաթողիկոսը, որի գոյութիւնը և նշանակութիւնը շատ մեծ է ամեն մի հայի համար:

* * *

„ԱՂԲԻՒՐ"

Լոյս տեսաւ №№ 5—6 (մայիս-յունիս) և ուղարկուեց բոլոր բաժանորդներին:

Բովանդակութիւն.

№ № 5—6

Գարնան փունջը Ս. Գիւլզադեան—Բուէճ (ժողովրդական զրոյց) Ա. Մեհրաբեան.—Ս. Մեռոնի օրհնէնք, Մ. Աբեղեան.—Իր վիճակից գոհ մանուկը (Ֆրանսերէնից) Օր. Ս. Շեխեանց.—Գարուն (բանաստեղծութիւն) Աղ. Ծատուրեան.—Խնձոր-եղը.— Ս. Քամալեանց.—Ծերունի Սարգսի յիշատակարանից (շարունակ.), Ց. Դուրբախեան.—Պահապան հրեշտակ (ստանաւոր), պ. Հ. Ադամեան.—Խելագար Բէսսօ (օսական աւանդ., Վս. Սոլովիէվի), Կ. Մարտիրոսեանց:

Գիտութիւն

Խժաւողներ IV ծիծեռնակ (պրոֆ. Մ. Բողդանով). Ա. Բաբախանեան.

Հետաքրքիր տեղեկութիւններ.

Նշանաւոր բոյս. Հրդեհաշէջների համար նոր հագուստ. Արեգային վառարան. Լուսային հեռագիր. Անտօնիօ Մագլիօբէխին. Հին Մովսէս. Ձեռքով տպելու մի նոր միջոց.

Այլ և այլք.

Ճշմարտախօս նորահարս, օր Մ. Սեբերրակեան.

Զուարճալիք.

Խոհանոցում. Հանելուկներ. Շուտասելուկ. Բերուս. Նախընթաց №-ի մէջ եղած հանելուկների բացատրութիւնը.

Յայտարարութիւններ.

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ.

—

«Journal de St. Petersbourg» լրագրում կարդում ենք. «Հեռագիրը հաղորդեց երկու նոր շրջաբերականների մասին, յունական գործերի վերաբերութեամբ: Աթէնքի արքունիքը՝ պաշտպանում յոյն նաւահանգիստների խոչընդոտ և համարում իւր պատերազմական ուժերի շուտափոյթ զինաթափութեան, իսկ միւս կողմից Տաճկաստանը գանգատում է, որ յունական զօրքերի հեռանալը սահմաններից շատ դանդաղ է լինում: Գուցէ երկու գանգատներն էլ մասամբ ճշմարիտ են. բայց նրանցից չը պէտք է եզրափակել նոր բարդութեանց կարելիութիւն: Ինչպէս մենք արդէն չորս օր առաջ արտայայտեցինք, պետութիւնք չեն կասկածում յոյն կառավարութեան մտերմութեան մասին և անտարակոյս չեն յապաղել հրաժարվելու ստիպողական միջոցներից, որոնք նոքա անհրաժեշտ են համարած և որոնք արդէն արին իրանց ազդեցութիւնը: Մենք չենք երկմտում, որ շուտով համաձայնութիւն կը կայանայ այն կառավարութեանց մէջ, որոնք ցանկանում են արևելքում խաղաղութիւն վերահանգնել և որ Յունաստանը կրկին վերադառնայ դէպի իւր խաղաղ և տնտեսական գործունէութիւնը:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Գաճաճներ Ս. Պետերբուրգում. Այս տարի Ս. Պետերբուրգի կենդանական այգին հրաւիրվածների մէջ գտնվում են և գաճաճներ, թւով հինգ հոգի այր և կին, որոնք նշանաւոր են իրանց կազմուածքի մանրութեամբ: Նոքա բոլորն էլ նշանաւոր են իրանց կարճահասակութեան հետ և իրանց մարմնոյ բոլոր անդամների համապատասխան չափով. Նոցա մտաւոր ընդունակութիւններն էլ շատ զարգացած են: Նոքա երգում են, ածում են մի քանի երաժշտական գործիքներ, խօսում են մի քանի լեզուներ, պարում են, մի խօսքով ամեն քայլում ցոյց են տալիս կենդանութիւն և մտաց սրութիւն: Հասակով կարճ է նախագահ միստր Միջը, որոյ կազմուածքի կանոնաւորութիւնը շատ նշանաւոր է: Սա, կարծես, ամենափոքր ջենտլմէնն է աշխարհիս երեսին, որովհետև 50 սանտիմետրից բարձր չէ և կշիռն 4 կիլոգրամ (մօտ 10 գրուանքայ: Նորա հասակն ու կշիռը կեանքի տասներորդ ամսից յետ մնաւ աւելացած չէն: Նորա ծնողներն աւելի բարձրահասակ են քան միջակ. իսկ եղբայրք միջակ հասակի են: Նա մի տարեկան հասակում արդէն վազվզելիս է եղել: Երեխայ ժամանակը շատ սիրում էր թաքնվիլ իւր հօր գլխարկում կամ մօր մուֆթում. այժմս էլ, եթէ ուզում է պահվիլ շրջապատողների աչքերից թաքնվում է բարձի երեսի տակ: Նորա անկողինը սովորական բարձից մեծ չէ: Ֆիզիքապէս և մտաւորապէս միստր Միջը բոլորովին առողջ է, մեծ ախորժակով ուտում է, քնում է շատ լաւ: Իշխանուհի Լօտին, որ ծնած է Լօնդոնում 1870 թ. 56 սանտիմետր երկարութեամբ հասակ ունի և կշիռն է 5 կիլոգրամ: Սա աւագոյնն է վեց քոյրերից: Երբ ծնել է, 15 սանտիմետր երկարութիւն է ունեցել և առաջին տարին նրա անկողինն եղել է սիգարի արկղիկը, որոյ մէջ բամբակ էր փռած: Իշխանուհի Լօտին հեշտութեամբ կարող է կանգնել հասակաւոր մարդու բռնում: Նորա ընկերներից «գնդապետ» Շօրտը, որ ծնած է 1867 թ. Նեվարկում, Նիւջերսէյ նահանգում, հասակաւ 58 սանտիմետր է և $5^1/_2$ կիլոգրամ կշիռ ունի: Սա շատ ուրախ բնաւորութեան տէր մարդ է և շատ սիրում է կանանց հետ սիրահարութիւնք: Պարոն և տիկին Տօմսերը, որոնք կառավարում են փոքրիկ նախագահի տան տնտեսական մասը—գեղեցիկ զոյգ են: Միստր Տօմսը, ծնած 1868 թ. Լոնդոնում, հսկայն է այս գաճաճների մէջ: Նորա հասակը հասնում է 85 սանտիմետրի, իսկ կշիռը 20 կիլոգրամի: Միսսիս Տօմսը, նորա կինը ծնած 1865 թ. Հերեֆօրդում (Անգլիայում) 75 սանտիմետրից բարձր չէ և կշիռն է 14 կիլոգրամ: Սա աւագագոյնն է 10 քոյրերից և շատ համակրելի և գեղեցիկ դէմք ունի: Նա լաւ տանտիկին է ու լաւ կարում է և գործում և պարծենալով իւր ձեռագործութեամբ ամեն ցանկացողներին սիրով ցոյց է տալիս իւր աշխատանքները: Միստր Տօմսը ծանօթացել էր օրիորդ Ջեննի կէնտի հետ Դուբլինի աշխարհահանդէսում 1885 թ. ամառն երբ պ. Գարվէսը իւր գաճաճների խմբով ներկայացումներ էր տալիս, իսկ անցեալ տարի օգոստոսին նոքա իրար հետ ամուսնացան: Երկուսն էլ իրանց ամուսնութեամբ երջանիկ են և բաղդաւոր: Բոլոր հինգ գաճաճներն էլ քիչ են ուտում: Իւրաքանչիւրի նախաճաշը, մեծ մասամբ մի ձու է, իսկ ճաշին նրանց տալիս են մի մի փոքրիկ կտոր միս, թէև բոլոր օրը ոտքի վերայ են, իսկ քնում են նոքա սովորաբար օրական վեց ժամ:

* * *

Փարիզում կազմվում է տօնախմբութիւն յօգուտ Պաստերի հաստատութեան (հիւանդանոց): Այս տօնախմբութեան մասնակցել խոստացել են շատ ֆրանսիացի գիտնականք և արուեստագէտք: Առաջ էնք բերում պատասխանները մի քանի անդամների, որոնք հրաւիրվեցան մասնակցելու տօնախմբութեան:

«Ես ինձ համար մեծ պատիւ եմ համարում, կարող չեմ մասնակցել արտայայտելու զարմանք այն մեծ գիտնականի առաջ, որ կազմում է ներկայ դարի և մեր հայրենեաց փառքը, մեծ մարդու առաջ, որոյ քաջութիւնն ու գիտութիւնը յաղթեցին կատաղութեան մարդկութեան այս պատուհասին» Շ. Գունօ. «Խնդրում եմ իմ յարգելի ընկեր, Պաստերին յիշել այն ինչ որ ես ասացի ճեմարանը մտնելիս» «Դուք որոնում էք, ասացի ես նրան, միջոց կատաղութեան թոյնի դէմ և դուք կը գտնէք այն: Ես պարծենում եմ, որ կեանքումս մի անգամ կարող եղայ մարգարէանալ» Էռնէստ Ռընան.

«Կատաղի ուրախութիւնն, որով աշխարհը յայտնեց պ. Պաստերին իւր շնորհակալութիւնն, է կատաղութեան միակ տեսակն, որ երևելի գիտնականն անկարող եղաւ բուժել» «Կօկլէն» Տօնախմբութիւնը կատարվելու էր 11-ին մայիսի:

* * *

Վատիկանի այգին.— Ամբողջ բլուրը, դէպի սուրբ Պետրոս տանող զառիվէր ճանապարհը և այնտեղից հովիտ իջնող լերան լանջը ամբողջապէս ծածկուած են այգիներով: Այս բոլոր ծառերով ծածկուած տարածութիւնը կտրտուած է բազմաթիւ ծուռը մուռ ճանապարհներով, որոնց վերայ անցնում է կառքը: Այնտեղ ներքևում, նա ամենևին չի տեսնում արտաքին աշխարհը: Այնտեղ հովիտում սփռուած են ծառերով, այգիներ, որոնց բերքերը գործ են ածում Վատիկանի խոհանոցում և ճաշերին: Վերևից նայողի վերայ շատ հիանալի տպաւորութիւն են անում իւր աչքերի տակ սփռուած կանաչազարդ մարգագետինները և արհեստական կերպով զարդարած բանջարանոցները և ծաղկանոցները: Հեռու նայանից երևում է, Միջին դարերից մնացած, մի կիսաւեր պարիսպ. բլուրի ամենաբարձր տեղում շինուած է մի դիտանոց, որտեղից դիտողի առաջ բացվում են պարտէզների, դաշտերի, Մօնտեմարիօ ասուած բլրի և որ գլխաւորն է ամբողջ Վատիկանի տեսքերը: Այնտեղից երևում են նա և սուրբ Պետրոսի եկեղեցին, մի քանի ուրիշ փոքր եկեղեցիներ, պալատներ, ուսումնարաններ, վանքեր և գերեզմանոցը: Լեօն XIII պապը այնտեղ շինել է տուել մի հովանոց որտեղ զբօսանքից յետոյ, նա հանգստանում է, կարդում է և երբեմն էլ խօսակցում է իւր մերձաւոր մարդոց հետ, արտաքոյ բարձր քաղաքականութեան և եկեղեցական գործերի վերայ: Նա շատ է հետաքրքրվում գեղարուեստներով և խօսում է իւր մերձաւորների հետ, Վատիկանում գտնուած գեղարուեստական իրերի պահպանութեան վերայ: Այնտեղ ոչ մի բան չի յիշեցնում քաղաքը և հովիտի մէջ լսվում է միայն զանգակի խուլ ձայնը: Բլրի մի զառիվայր տեղում, անտառն այնքան խիտ է, որ նա յիշեցնում է հարաւային երկիրների նախնական անտառները, այնտեղ երևում են հին միշտ կանաչ կեչիներ, դափնու ծառերը, նոյա մէջ բուսած թուփերը և բազմաթիւ բացեղներ, որոնք բարձրանալով միմեանց են հիւսում նոցա ճիւղերը: Այստեղ ամենևին չեն երևում քաղաքակրթութեան կարգ և կանոնի և այգեգործի ձեռքի հետքերը: Սակայն այս վայրենի երկիրը ամեն կողմից հիանալի է, քարերի ճեղքուածքներից էլ դուրս են բուսնում վայրենի ծաղիկներ: Ծառերի ստուերներում բուսնում է մանուշակ, որ լցնում է օդը անուշահոտութեամբ: Այդ տեղերի լռութիւնը խանգարում է միայն Ջրընկեցի ձայնն, որ թափւում է ժայռերի և քարերի միջից:

* * *

Չինաստանի մէջ մամլոյ ազատութիւնը յոյժ կաշկանդվեալ է: Բէքլինի լրագիրը Քուանկ Սու կայսեր մէկ հրովարտակը կը հրատարակէ, յորում Վօնկ—Ցի անուն դրագէտ հեղինակի մը պատիժն, որ էր չորս կտոր լինել, պարզ գլխատման մը փոխուած է: Այդ հեղինակը ճանչցուած է ոճրագործ ընդդէմ կայսերական անձին, որովհետև իւր մէկ գիտնական աշխատութեան մէջ փոխանակել Չինական կայսերաց բազմաց անուններն հրատարակած է չենոց պալատական սովորութեանց հակառակ: Այս մեծ ոճրագործին որդիքը շնորհ ընդունած են՝ փոխանակ իրենց հօր հետ գլխատուելու, առաջիկայ աշնան սկիզբն գլխատուիլ:

(Փունջ)

ԽՄԲԱԳԻՐ ՊԵՏՐՈՍ ՍԻՄԷՕՆԵԱՆՑ

ՀՐԱՏԱՐԱԿԻՉ Հ. ԷՆՖԻԱՃԵԱՆՑ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը յայտնում է ՚ի գիտութիւն ընդհանրութեան, թէ քաղաքային Խորհուրդը, ՚ի նկատի ունենալով առաջիկայ չորս տարով 1887—1890 քաղաքային ընդհանուր ընտրութիւնները, 1886 թ. մայիսի 5-ի նիստում որոշեց.

1) Կազմել ընտրողական ցուցակներ մինչև ներկայ տարւոյ օգոստոսի 1-ը:

2) Ընդհանուր և անբաժան կալուածքում մասն ունեցողներին իրաւունք տալ յայտնելու Վարչութեանը մինչև Յուլիսի 1-ը ընդհանուր կալուածքում իրենց մասն ունենալու մասին, ցոյց տալով իրենց պատկանելի բաժինը: Յայտարարութիւնը ներկայացնելուն պէս վարչութիւնը հաւաքած հարկը հաւասարապէս կը բաժանէ կալուածատէրերի մէջ, եթէ յայտնի է նրանց թիւը:

3) Ընտրողների հաւատարմատարները և անչափահաս ընտրողների խնամակալները պէտք է ներկայացնեն եօթ օր ընտրութիւններից առաջ քաղաքագլխին առաջինները սահմանած դրոշմաւոր թղթի վերայ գրած իրենց հաւատարմաթղթերը (շրջաբ. Ն. Գ. Մինիստ. 1876 թ. Նոյեմբերի 26-ից, № 10,766), հաստատած նօտարիւսով, եթէ նրանց յանձնողների ստորագրութիւնները ծանօթ չեն Վարչութեանը, իսկ վերջինները՝ խնամակալութեան հրամանները, որով նրանք նշանակուած են խնամակալի կոչումի մէջ: Ինչպէս հաւատարմատարներին, նոյնպէս և խնամակալներին իրենց խնամակալութեան ներկ քոյ հետ եղողների գրել ընտրութեան ցուցակներում մի համարի տակ, իսկ ընտրողական ժողովի նիստի օրը, այդ անձանց անունները կախել, նիստի դահլիճում:

4) Վարչութեան կողմից պատրաստած ընտրողական ցուցակները, յայտնել ՚ի գիտութիւն ընդհանրութեան Սեպտեմբերի 4-ին, իբրև լրացուցիչ յաւելուած լրագիրների, ուղարկել նրանց ստորագրողներին և ցուցակները հանդէս հանել խորհրդարանի դահլիճում:

5) Ընտրողական ցուցակներում եղած անկանոնաւորութեան դէմ քաղաքի բնակիչների կողմից արած նկատողութիւնները, ընդունել քաղաքային վարչութեան մէջ բացառապէս Սեպտեմբերի 7-ից մինչև 21 և յետ այնորիկ ցուցակները ներկայացնել Խորհրդի հաստատութեանը: Քաղաքային վարչութիւնը պատիւ ունի յայտարարելու վերը գրուածները, որպէս զի այն անձինք, որոնք ընտրութեան ժամանակ ձայն ունին, իւր ժամանակին ուղարկեն Քաղ. Վարչութեանը այդ մասին իրենց նկատողութիւնները: (126) 3—2

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ, համաձայն բարձրագոյն հաստատած քաղաքային կանոնագրութեան 17 և 22 յօդ. և այս տարւոյ մայիսի 5-ին կայացած քաղաքային Խորհրդի որոշման, հրաւիրում է պ. պ. տանտէրերին, որոնք ցանկանում են մասնակցել առաջիկայ քաղաքային չորս 1887—1890 թ. տարի ժամանակով ընդհանուր ընտրութիւններին ներկայացնել անմիջապէս քաղաքային գանձարանին մինչև այս տարւոյ մայիսի 31-ը իրենց կալուածքների վերայ մնացած գնահատութեան հարկի ապառիկ դրամները: Քաղաքային վարչութիւնը այսու յայտարարում է, թէ այն անձինք, որոնք նշանակեալ ժամանակամիջոցին լիովին չեն ներկայացնի իրենց վերայ մնացած ապառիկները ընտրողական ցուցակների մէջ չեն նշանակուիլ:

(120) 3—2

ДОЗВОЛЕНО ЦЕНЗУРОЮ ТИФЛИСЪ, 6-го Іюня 1886 г. Типограф. М. Рот. и К-о На Гал. проспектѣ Домъ № 41. Տպարան Մ. Ռօտինեանց և ընկ.